ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 փետրվարի 2023 թվականի N 226-Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԽՈՒՐԻԿ ԳՅՈՒՂԻ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ-ԱԽՈՒՐԻԿ ԽՃՈՒՂԻ 1/1 ՀԱՍՑԵԻ 08-006-0081-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով և ի կատարումն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 16-ի թիվ 16-Ա որոշման,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի, Ախուրիկ գյուղի Ղարիբջանյան-Ախուրիկ խճուղի, 1/1 հասցեի, 08-006-0081-0001 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0,06994 հեկտար մակերեսով հողամասն անհատույց սեփականության իրավունքով փոխանցել Հայաստանի Հանրապետությանը, ի դեմս Հայաստանի Հանրապետության պետական գույքի կառավարման կոմիտեի:

2. Գույքային իրավունքների փոխանցումը կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

«27» փետրվարի 2023 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ N 227-Ա

<<27>> փետրվարի 2023 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի «գ» կետի դրույթներով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2004 թվականի ապրիլի 22-ի «Քաղաքացիական պաշտպանության պլանների մշակման կարգը սահմանելու մասին» N633-Ն որոշման 4-րդ կետի ե և 6-րդ կետի է ենթակետերի.

որոշում եմ՝

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության <<Շիրակի մարզի Ախուրյան համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանը>>՝ իր հավելվածներով.

2) Համայնքի հիմնական ցուցանիշները քաղաքացիական պաշտպանության վիճակի համաձայն N1 հավելվածի.

3) Համայնքի քաղաքացիական պաշտպանության.

4) Համայնքի բնակչության անհատական պաշտպանության միջոցներով ապահովման հաշվարկը՝ համաձայն N 3 հավելվածի.

5) Համայնքի բնակչության պատսպարման հաշվարկը՝ ղեկավար կազմի կառավարման, կապի և ազդարարման սխեման՝ համաձայն N 2 հավելվածի համաձայն N 4 հավելվածի.

6) Համայնքի բնակչության տարահանման հաշվարկը՝ համաձայն N 5 հավելվածի.

7) Համայնքի տարահանված բնակչության և քաղաքացիական պաշտպանության կազմավորումների անձնակազմի սննդամթերքով ապահովման հաշվարկը՝ համաձայն N6 հավելվածի.

8) Համայնքի տարահանված բնակչության անհրաժեշտ հագուստի և առաջին անհրաժեշտության ապրանքների ապահովման հաշվարկը՝ համաձայն N 7 հավելվածի.

9) Համայնքի ինժեներական ապահովման տեխնիկայի և տրանսպորտային միջոցների հաշվարկը՝ համաձայն N 8 հավելվածի.

10) Համայնքի քաղաքացիական պաշտպանության ուժերի և միջոցների հաշվարկը՝ համաձայն N 9 հավելվածի:

Համայնքի աշխատակազմի քարտուղարին՝

1.Համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանի մեկ օրինակը տրամադրել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչությանը:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի 2023 թվականի փետրվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանը հաստատելու մասին» թիվ 203-Ա որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԻԳԻԹՅԱՆ

27 փետրվարի 2023 թվական
Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ N 228-Ա

<<27>> փետրվարի 2023 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԱՋՈՒՌ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ ՍԱՀԱԿԱՆՈՒՇ ՇԱՅՎԱԼԱԴԻ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏՐՈՆ /ՕԳՆԱԿԱՆ/ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 43-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 20-ի թիվ 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 9-րդ կետի, 14-րդ ենթակետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության մշտական գործող հանձնաժողովի 2023 թվականի փետրվարի 24-ի թիվ 10 արձանագրության հերթական նիստի դրական եզրակացությունը և հաշվի առնելով Էդգար Մովսիսյանի դիմումը որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ջաջուռ գյուղի բնակիչ, մանկուց 2-րդ խմբի անժամկետ հաշմանդամ, կողմնակի անձի մշտական խնամքի կարիք ունեցող՝ Սահականուշ Շայվալադի Մովսիսյանի /ծնված՝ 1971 թվականի ապրիլի 23-ին/ նկատմամբ եղբորը՝ Էդգար Շայվալադի Մովսիսյանին նշանակել պատրոն /օգնական/:

2.Որոշման մեկ օրինակը տրամադրել Էդգար Շայվալադի Մովսիսյանին:

3.Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ջաջուռ բնակավայրի վարչական ղեկավար Կոլյա Գրիգորի Գրիգորյանին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ԻԳԻԹՅԱՆ

27 փետրվարի 2023 թվական
Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ N 229-Ա

« 27 » փետրվարի 2023 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 18-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 12-ի N 1096-Ն հրամանի 3-րդ կետը, որոշում եմ՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ներքին աուդիտի կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԻԳԻԹՅԱՆ

«27» փետրվարի 2023 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

« 28 » փետրվարի 2023 թվականի թիվ 230-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐ ՀԱՄԱԿԱՐԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի, 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 57-րդ հոդվածի 5-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 7-ի N 4 որոշմամբ հաստատված կանոնադրության 19-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի լիազորությունները սահմանված կարգով իրականացնելու համար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի տեղակալներին հանձնարարել համակարգել հետևյալ բնագավառներն ու գործառույթները և դրանք ապահովող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունը.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Կարեն Արշակյանին վերապահել համակարգելու՝

1) Քաղաքաշինության, բնակարանային կոմունալ տնտեսության, բարեկարգման, հողօգտագործման, համայնքային գույքի կառավարման և օգտագործման, ենթակառուցվածքների կառավարման, շահագործման բնակավառները՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ախուրյանի կոմունալ սպասարկում և բարեկարգում» և «Մարմաշեն համայնքի տեխնիկաների սպասարկման կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով,

2) տնտեսական զարգացման, ծրագրերի, գովազդի, առևտրի և ծառայությունների, զբոսաշրջության բնագավառները՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի միջոցով:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի տեղակալ Վարդան Իկիլիկյանը հանդիսանում է համայնքի աշխարհազորային պայմանական բրիգադի ղեկավարը (հրամանատարը): Նրան վերապահել համակարգելու՝

1) պաշտպանության, զորակոչի, զորահավաքի ու վարժական հավաքների, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության, սանիտարահիգիենիկ, հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների կազմակերպման բնագավառները,

2) գյուղատնտեսության, գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման, շրջակա միջավայրի պահպանության, անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառները՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի միջոցով,

3) վարչական ղեկավարների գործունեության համակարգման բնագավառը:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի տեղակալ Կարեն Սերգոյանին վերապահել համակարգելու՝

կրթության, մշակույթի, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, սոցիալական պաշտպանության, տեղական հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման, հանրային միջոցառումների կանոնակարգման, քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների, տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության, տնտեսական գործունեության խթանման, քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով համայնքին վերապահված գործառույթների կազմակերպման և վարչական կենտրոնում տարվող աշխատանքների համակարգման բնագավառները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԻԳԻԹՅԱՆ

«28» փետրվարի 2023 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ

«01» մարտի 2023 թվականի թիվ 231-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԶԱՏԱՆ ԳՅՈՒՂԻ 7-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 32 ՀԱՍՑԵԻ 08-004-0020-0027 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացիներ Արշակ Խաչատուրի Չարխիֆալաքյանը (ծնված 1961թ), Լիդա Ցոլակի Չարքիֆալաքյանը (ծնված 1965թ), Ֆեդրունյա Արշակի Չարխիֆալաքյանը (ծնված 1985թ), Քրիստինա Արշակի Չարխիֆալաքյանը (ծնված 1987թ) և Արա Արշակի Չարխիֆալաքյանը (ծնված 1990 թ) դիմել են Ախուրյան համայնքի ղեկավարին՝ համասեփականության իրավունքով Ախուրյան համայնքի Ազատան գյուղի 7-րդ փողոց, թիվ 32 հասցեի իրենց ընտանիքին պատկանող 08-004-0020-0027 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,14000 հեկտար մակերեսով տնամերձ հողամասի վրա առկա, ինքնակամ համարվող բնակելի տան և բնակելի նշանակության շենք շինություններն օրինական ճանաչելու խնդրանքով:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ազատան գյուղի 7-րդ փողոց, թիվ 32 հասցեի հողամասի վրա ինքնակամ կառուցված 427,07 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով բնակելի նշանակության շենք շինությունները որոնք կառուցվել են 1990թ"-ին (մինչև 2001 թվականի մայիսի 15-ը) ճանաչել օրինական, իսկ 74,67 քառակուսի մետր արտաքին մակերեսով ավտոտնակը, 60,95 քառակուսի մետր արտաքին մակերեսով անասնաշենքը և 4,2 քառակուսի մետր մակերեսով պարիսպը կառուցվել են 2009-ից 2020 թվականներին (2001 թվականի մայիսի 15-ից հետո): Ինքնակամ կառույցները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 5-ի թիվ 14-Ն որոշման 2-րդ կետի, «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» Հայաստանի

Հանրապետության կառավարության 2006 թվականի թիվ 912-Ն որոշման 1-ին և 4-րդ կետերի դրույթներով, համաձայն նույն որոշման կարգի 8-րդ, 8.1-րդ, 10-րդ, 11-րդ կետեր և 13-րդ կետի բ) ենթակետի, 22.1 կետի պահանջների, ինչպես նաև հաշվի առնելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով սահմանված շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցների (Գգ) սահմանված չափը՝ որը Ազատան գյուղի (Շիրակի մարզ, 14-րդ գոտի) համար 0,1209 է՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ազատան գյուղի, 7-րդ փողոց, թիվ 32 հասցեի հողամասի վրա ինքնակամ կառուցված 427,07 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով բնակելի նշանակության շենք շինությունները ճանաչել օրինական՝ առանց վճարների գանձման:
2. Նույն հողամասի վրա 2009-ից 2020 թվականներին ինքնակամ կառուցված 74,67 քառակուսի մետր արտաքին մակերեսով ավտոտնակը, 60,95 քառակուսի մետր արտաքին մակերեսով անասնաշենքը և 4,2 քառակուսի մետր մակերեսով պարիսպը ճանաչել օրինական սահմանված վճարների դիմաց:
3. Որոշման 2-րդ կետով օրինական ճանաչված օժանդակ շինությունների յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի օրինականացման համար սահմանել 6000 Հայաստանի Հանրապետության դրամ և կիրառել շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցը՝ որը Ազատան գյուղի համար 14-րդ գոտում հաստատված է 0,1209: Օժանդակ շինությունների օրինականացման համար հաշվարկված վճարը կազմում է 101425 (մեկ հարյուր մեկ հազար չորս հարյուր քսանհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ:
4. Որոշման ընդունման օրվանից հաշված, 60 օրյա ժամկետում, օրինականացման համար սույն որոշման 3-րդ և 4-րդ կետերով սահմանված գումարները չվճարելու դեպքում՝ որոշումն համարվում է ուժը կորցրած:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահին:
6. Գույքային իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ԻԳԻԹՅԱՆ

գ.Ախուրյան

01 մարտի 2023թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ

«01» մարտիի 2023 թվականի թիվ 232-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԶԱՏԱՆ ԳՅՈՒՂԻ 42-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 31 ՀԱՍՑԵԻ 08-004-0075-0011 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Աշոտ Սամվելի Գյոլչանյանը (ծնված 21/05/1984 թվական) դիմել է Ախուրյան համայնքի ղեկավարին՝ ժառանգության իրավունքով (հիմք նոտարական ակտ թիվ 787-20230203-84-6646308) իրեն պատկանող 08-004-0075-0011 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,03350 հեկտար մակերեսով տնամերձ հողամասի վրա առկա, ինքնակամ համարվող բնակելի նշանակության շենք շինություններն օրինական ճանաչելու խնդրանքով:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատան համայնքում հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 1992 թվականի ապրիլի 3-ի թիվ 2 որոշմամբ Սամվել Աշոտի Գյոլչանյանի (մահացած 14/03/2013 թվական) անվամբ սեփականաշնորհված և ժառանգության իրավունքով Աշոտ Սամվելի Գյոլչանյանին փոխանցված՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ազատան գյուղի 42-րդ փողոց, թիվ 31 հասցեի հողամասի վրա ինքնակամ կառուցված 50,18 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի տունը որը կառուցվել է 1965թ.-ին (մինչև 2001 թվականի մայիսի 15-ը) ճանաչել օրինական, իսկ 28,68 քառակուսի մետր արտաքին մակերեսով կիսանկուղը և 3,06 քառակուսի մետր մակերեսով աստիճանը կառուցվել են 2012 թվականին (2001 թվականի մայիսի 15-ից հետո): Ինքնակամ կառույցները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 5-ի թիվ 14-Ն որոշման 2-րդ կետի, «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի թիվ 912-Ն որոշման 1-ին և 4-րդ

կետերի դրույթներով, համաձայն նույն որոշման կարգի 8-րդ, 8.1-րդ, 10-րդ, 11-րդ կետեր և 13-րդ կետի բ) ենթակետի, 22.1 կետի պահանջների, ինչպես նաև հաշվի առնելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով սահմանված շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցների (Գգ) սահմանված չափը՝ որը Ազատան գյուղի (Շիրակի մարզ, 14-րդ գոտի) համար 0,1209 է՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ազատան գյուղի, 42-րդ փողոց, թիվ 31 հասցեի հողամասի վրա ինքնակամ կառուցված 50,18 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի տունը ճանաչել օրինական՝ առանց վճարների գանձման:
2. Նույն հողամասի վրա 2012 թվականին ինքնակամ կառուցված 28,68 քառակուսի մետր արտաքին մակերեսով կիսանկուղը և 3,06 քառակուսի մետր մակերեսով աստիճանը ճանաչել օրինական սահմանված վճարների դիմաց:
3. Որոշման 2-րդ կետով օրինական ճանաչված բնակելի նշանակության շինությունների յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի օրինականացման համար սահմանել 10000 Հայաստանի Հանրապետության դրամ և կիրառել շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցը՝ որը Ազատան գյուղի համար 14-րդ գոտում հաստատված է 0,1209: Բնակելի նշանակության շինությունների օրինականացման համար հաշվարկված վճարը կազմում է 38374 (երեսունութ հազար երեք հարյուր յոթանասունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ:
4. Որոշման ընդունման օրվանից հաշված, 60 օրյա ժամկետում, օրինականացման համար սույն որոշման 3-րդ և 4-րդ կետերով սահմանված գումարները չվճարելու դեպքում՝ որոշումն համարվում է ուժը կորցրած:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահին:
6. Գույքային իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ԻԳԻԹՅԱՆ

գ.Ախուրյան

01 մարտի 2023թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«01» մարտի 2023 թվականի N 233 -Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԶԱՏԱՆ ԳՅՈՒՂԻ 9-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 29 ՀԱՍՑԵԻ 08-004-0022-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Արա Հովսեփի Գևորգյանը դիմել է Ախուրյան համայնքի ղեկավարին՝ սեփականության իրավունքով իրենց ընտանիքին պատկանող 08-004-0022-0001 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,26898 հեկտար մակերեսով տնամերձ հողամասի վրա առկա, ինքնակամ համարվող բնակելի նշանակության շենք շինություններն օրինական ճանաչելու խնդրանքով:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատան համայնքում հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 1992 թվականի ապրիլի 23-ի թիվ 2 որոշումով Արա Հովսեփի Գևորգյանի ընտանիքի անդամների անվամբ սեփականաշնորհված՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ազատան գյուղի 9-րդ փողոց, թիվ 29 հասցեի հողամասի վրա ինքնակամ կառուցված 136,20 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը, 28,79 քառակուսի մետր արտաքին մակերեսով ավտոտնակը, 112,50 քառակուսի մետր արտաքին մակերեսով ձեղնահարկը և 43,15 քառակուսի մետր արտաքին մակերեսով անասնաշենքը կառուցվել են 2003-ից 2019 թվականներին (2001 թվականի մայիսի 15-ից հետո): Ինքնակամ կառույցները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 6-րդ մասի, «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի թիվ 912-Ն որոշման 1-ին և 4-րդ կետերի դրույթներով, համաձայն նույն որոշման կարգի 8-

րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ կետի ա), բ) ենթակետերի, ինչպես նաև հաշվի առնելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով սահմանված շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցների (Գգ) սահմանված չափը՝ որը Ազատան գյուղի (Շիրակի մարզ, 14-րդ գոտի) համար 0,1209 է՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Համասեփականության իրավունքով քաղաքացիներ՝ Հովսեփ Սերյոժայի Գևորգյանին (ծնված 04/01/1964 թվական), Անահիտ Ալեքսանի Գևորգյանին (ծնված 10/12/1964 թվական), Արա Հովսեփի Գևորգյանին (ծնված 18/11/1985 թվական), Սերյոժա Հովսեփի Գևորգյանին և Լենա Հովսեփի Գևորգյանին պատկանող, Ախուրյան համայնքի, Ազատան գյուղի 9-րդ փողոց, թիվ 29 հասցեի, 08-004-0022-0001 կադաստրային ծածկագրով, 0,26898 հեկտար մակերեսով բնակավայրերի տնամերձ հողամասի վրա 2003-2019 թվականներին կառուցված 136,20 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը, 28,79 քառակուսի մետր արտաքին մակերեսով ավտոտնակը, 112,50 քառակուսի մետր արտաքին մակերեսով ձեղնահարկը և 43,15 քառակուսի մետր արտաքին մակերեսով անասնաշենքը ճանաչել օրինական սահմանված վճարների դիմաց:

2 Որոշման 1-ին կետով օրինական ճանաչված բնակելի տան յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի օրինականացման համար սահմանել 10000 Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ օժանդակ շինությունների համար ահմանել 6000 Հայատանի Հանրապետության դրամ և կիրառել շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցը՝ որը Ազատան գյուղի համար 14-րդ գոտում հաստատված է 0,1209: Ինքնակամ կառուցված 136,20 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տան, 28,79 քառակուսի մետր արտաքին մակերեսով ավտոտնակի և 112,50 քառակուսի մետր արտաքին մակերեսով ձեղնահարկի օրինականացման վճարը կազմում է 335485 Հայաստանի Հանրապետության դրամ իսկ 43,15 քառակուսի մետր արտաքին մակերեսով անասնաշենքի օրինականացման վճարը կազմում է 31301 Հայաստանի Հանրապետության դրամ: Ընդամենը օրինականացման վճարը կազմում է 366786 (երեք հարյուր վաթսունվեց հազար յոթ հարյուր ութսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ:

3 Որոշման ընդունման օրվանից հաշված, 60 օրյա ժամկետում, օրինականացման համար սույն որոշման 3-րդ կետով սահմանված գումարը չվճարելու դեպքում՝ որոշումն համարվում է ուժը կորցրած:

4 Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

5 Գույքային իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

«01» մարտի 2023 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՄԱՐՏԻ 2023 ԹՎԱԿԱՆ N 234-Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԶԱՏԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-004-0058-0019 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԱՌԿԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Մուրազ Խդրի Բրոյանը (ծնված 04/04/1965 թվական) դիմել է Ախուրյան համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատան համայնքում հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 1992 թվականի ապրիլի 3-ի թիվ 2 որոշմամբ իրենց ընտանիքի անդամների անվամբ սեփականաշնորհված և ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող 0,12 հեկտար մակերեսով բնակավայրերի տնամերձ հողամասի վրա ինքնակամ կառուցված բնակելի տունը և օժանդակ շինություններն օրինականացնելու խնդրանքով:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ազատան գյուղի 50-րդ փողոց, 7 տուն հասցեի տնամերձ հողամասի վրա 2020 թվականին կառուցված 122,79 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունն ու 4,81 քառակուսի մետր մակերեսով աստիճանահարթակը համարվում են ինքնակամ կառույցներ, որոնք կառուցված չեն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 6-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի, 8-րդ կետի և «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի թիվ 912-Ն որոշման կարգի 8-րդ, 8.1-րդ, 10-րդ, 11-րդ, 22.1-րդ կետերի և 13-րդ կետի ա) ենթակետի դրույթներով, ինչպես նաև հաշվի առնելով «Անշարժ գույքի հարկով հարկման

նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով սահմանված շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցների (Գգ) սահմանված չափը՝ որը որը Ազատան գյուղի (Շիրակի մարզ, 14-րդ գոտի) համար 0,1209 է՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ազատան գյուղի, 50-րդ փողոց, 7 տուն հասցեի հողամասի վրա 2020 թվականին կառուցված 122,79 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունն ու 4,81 քառակուսի մետր մակերեսով աստիճանահարթակը ճանաչել օրինական՝ սահմանված վճարների դիմաց:
2. Նույն հողամասի վրա ինքնակամ կառուցված 10,68 քառակուսի մետր մակերեսով անավարտ անասնաշենքը, 14,21 և 6,08 քառակուսի մետր մակերեսներով օժանդակ շինությունները և 7,15 քառակուսի մետր մակերեսով ծածկը թողնել ինքնակամ:
3. Որոշման 1-ին կետով օրինական ճանաչված բնակելի տան և նույն ծավալի մեջ կառուցված աստիճանահարթակի մեկ քառակուսի մետրի օրինականացման համար սահմանել 10000 Հայաստանի Հանրապետության դրամ և կիրառել շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցը: Օրինականացման համար հաշվարկված վճարը կազմում է 154269 (մեկ հարյուր հիսունչորս հազար երկու հարյուր վաթսունինը) Հայաստանի Հանրապետության դրամ:
4. Որոշման ընդունման օրվանից հաշված, 60 օրյա ժամկետում օրինականացման համար սույն որոշման 2-րդ կետով սահմանված գումարները չվճարելու դեպքում՝ որոշումն համարվում է ուժը կորցրած:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահին:
6. Գույքային իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

«01» մարտի 2023 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՄԱՐՏԻ 2023 ԹՎԱԿԱՆ N 235-Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի ԹԻՎ 46-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի դրույթներով, որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի 2023 թվականի հունվարի 19-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան գյուղի Անկախության փողոց տուն 18 հասցեի 08-007-0112-0014 կադաստրային ծածկագրով հողամասի վրա ինքնակամ կառուցված բնակելի տունը և բնակելի նշանակության շենք շինություններն օրինական ճանաչելու մասին» թիվ 46-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.
   1) Որոշման նախաբանում «սեփականության իրավունքով իրեն» բառերը փոխարինել «ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց ընտանիքի անդամներին» բառերով, «0,0589» թվերը փոխարինել «0,067» թվերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

«01» մարտի 2023 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՄԱՐՏԻ 2023 ԹՎԱԿԱՆ N 236-Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԽՈՒՐՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-007-0627-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՑ 0,05339 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 10-րդ հոդվածի 8-րդ մասի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան բնակավայրի տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի հողերի նպատակային նշանակության, այլ հողեր գործառնական նշանակության, 08-007-0627-0001 կադաստրային ծածկագրով հողամասի սահմաններում նոր առաջացած 0,05339 հեկտար մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոխել բնակելի կառուցապատման հողերի գործառնական նշանակություն:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

«01» մարտի 2023 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ. Ախուրյան, (0312) 70885 , 091 420 451 akhuryan.shirak@mail.ru , akhuryan.shirak@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ N 237-Ա
03 ՄԱՐՏԻ 2023 ԹՎԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԵԹԻ ԳՅՈՒՂԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենքի 90-րդ հոդվածի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի դրույթներով և հաշվի առնելով քաղաքացի Համլետ Գուրգենի Խաչատրյանի դիմումը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի (19.01.2023թ. ժառանգության գործ թիվ 399) հիման վրա գյուղատնտեսական նշանակության հողամասի վարձակալության իրավունքը պայմանագրով իր անունով վերաձևակերպելու մասին.

Որոշում եմ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Քեթի գյուղի տարածքում գտնվող /կոդ՝ 104-001-12/ Գուրգեն Խաչատուրի Խաչատրանին /մահացած 26.04.2021թ./ վարձակալության իրավունքով տրամադրված 1,5 հա գյուղատնտեսական նշանակության հողամասի վարձակալության իրավունքը վերաձևակերպել ըստ օրենքի ժառանգություն ընդունած ժառանգ՝ Համլետ Գուրգենի Խաչատրյանի անվամբ, 09.10.2009թ. սեղանամատյան թիվ 1819 կնքված պայմանագրի մնացած պայմանների առանց փոփոխության, (հողամասի յուրաքանչյուր տարվա վարձավճարի չափը՝ 6000 /վեց հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ, վարձակալության պայմանագրի ժամկետը՝ մինչև 09.10.2034թ.):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ. Ախուրյան, (0312) 70885 , 091 420 451 akhuryan.shirak@mail.ru , akhuryan.shirak@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ N 238-Ա
03 ՄԱՐՏԻ 2023 ԹՎԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՌՆՈՒՏ ԳՅՈՒՂԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենքի 90-րդ հոդվածի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի դրույթներով և հաշվի առնելով քաղաքացիներ Գուսյա Վաչագանի Հակոբյանի և Հայկանուշ Իշխանի Պողոսյանի համատեղ դիմումը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերի (08.04.2021թ. ժառանգության գործ թիվ 615 և 08.04.2021թ. ժառանգության գործ թիվ 616) հիման վրա գյուղատնտեսական նշանակության հողամասի վարձակալության իրավունքը պայմանագրով 1/2 բաժնից իրենց անունով վերաձևակերպելու մասին.

Որոշում եմ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Լեռնուտ գյուղի տարածքում գտնվող /կոդ՝ 105-135-03/ Իշխան Սենիկի Պողոսյանին /մահացած 19.05.2020թ./ վարձակալության իրավունքով տրամադրված 1,51 հա գյուղատնտեսական նշանակության հողամասի վարձակալության իրավունքը վերաձևակերպել ըստ օրենքի ժառանգություն ընդունած ժառանգներ՝ Հայկանուշ Իշխանի Պողոսյանի 1/2 բաժնից/ և Գուսյա Վաչագանի Հակոբյանի /1/2 բաժնից/ անվամբ, 08.04.2010թ. սեղանամատյան թիվ 491 կնքված պայմանագրի մնացած պայմանների առանց փոփոխության, (հողամասի յուրաքանչյուր տարվա վարձավճարի չափը՝ 16 600 /տասնվեց հազար վեց հարյուր/ Հայաստանի Հանրապետության դրամ, վարձակալության պայմանագրի ժամկետը՝ մինչև 08.04.2035թ.):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ